

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԻՄԵՈՆ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ

Վ. Շ. ԽԱՌՈՒԿՅԱՆ

Սիմեոն Զուղայեցու (XVII դար) «Գիրք որ կոչի բերականութիւն» աշխատությունը առաջին գործն է, որն ընդգրկում է գրաբարի բերականական ամբողջ համակարգը:

Այդ երկում Զուղայեցին զգալի տեղ է հատկացնում նաև շարահյուսական հարցերին, սակայն դեռևս լիովին չի սահմանազատում շարահյուսությունը ձևաբանությունից, թեև դրանք շարադրում է իբրև տարբեր բաժիններ: Ավելի ձիշտ՝ շարահյուսությունը լուսաբանվում է ձևաբանության հետ խառը ձևով, ձևաբանական տերմիններով: Բառերը նախադասության մեջ դեռևս հորջորջվում են անուն, բայ, դերանուն կամ հոլովների անուններով՝ ուղղական, սեռական և այլն, բայց ոչ նախադասության անդամներ (ենթակա, ստորոգյալ, որոշիչ և այլն): Դրանք, իբրև այդպիսին, գիտակցվում են, բայց բացակայում է անվանումը, տերմինը: Սա էլ իր հերթին խանգարում է հարցի հստակ պատկերացմանը, նախադասության մեջ բառի դրսևորած ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների որոշակի սահմանազատմանը: Այդ է պատճառը, որ տարբեր խոսքի մասերով արտահայտվող նախադասության միևնույն անդամը քննվում է ոչ թե մեկ, այլ տարբեր գլուխներում: Մի շարք փաստեր հաստատում են, որ երբ նա խոսում է գոյականի ու ածականի մասին, նկատի ունի նաև դրանց շարահյուսական կիրառությունները, այն է՝ որոշիչը, որոշյալը, հատկացուցիչը և այլն: Այդ ելակետն էլ սլաշմանավորել է հեղինակի կողմից մի շարք երևույթների արժեքավորումն ու հետագա քննությունը: Ըստ որում նա գոյականն անվանում է ենթակալական, ածականը՝ մակադրական:

Դոյականն ու ածականը իրենց ըմբռնումով, հենց սահմանումների մեջ արդեն հնարավորություն ունեն միաժամանակ նախադասության անդամ դիտվելու, որովհետև դրանք բնութագրվում են ոչ թե բառական-իմաստային, այլ կիրառական՝ շարահյուսական սկզբունքով. «ենթակալական» այն բառն է, որն ինքնին կարող է գործածվել «բանի» մեջ, «մակադրականը» ինքնին չի կարող գործածվել, ուրիշ բառի վրա դրվող է, ունի իր «ենթակալականը»¹: Դոյականը փաստորեն բնութագրվում է իբրև լրացյալ, ածականը՝ իբրև լրացում (որոշիչ):

Շարահյուսությունը հիմնականում ներկայացվում է համաձայնություն և հոլովառություն բաժիններով: Առաջինի մեջ քննվում են ենթակայի ու ստորոգյալի, գոյական անդամի լրացումների ու դրանց լրացյալների, հարաբերականի ու հարաբերյալի, հարցման ու պատասխանի համաձայնությունը, երկ-

¹ Ուրիշ անուն Զուղայեցի, Դիրք որ կոչի բերականութիւն, Կոստանդնուպոլիս. 1725, էջ 142:

րորդի մեջ՝ բայերի, նախադրությունների և որոշ անունների (ածական, բայանուն) խնդրառությունը:

Խնդրառությունը քննվում է ոչ արդյունավետ սկզբունքով, որն իր վրա կրում է ձևաբանական կնիք: Օրինակ, բայ-ստորոգյալին առնչվող բոլոր անդամները համարվում են խնդիրներ և խմբավորվում ըստ հոլովների: Նրեռւյթի նկարագրությունը մասամբ պարզեցնելու նպատակով բայերն ըստ խնդրառության բաժանվում են երկու մասի՝ «եղառական»՝ մեկ «խնդիր» պահանջողներ, և «յոգնառական»՝ մեկից ավելի խնդիր պահանջողներ:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը Ջուղայեցին անվանում է «համաձայնություն անուն ընդ բայի», քանի որ շարահյուսական անվանումներ չունի: Նա քննում է ենթակայի խոսքիմասային ու հոլովական որոշ արտահայտություններ և բայ-ստորոգյալի համաձայնությունը ենթակայի հետ: Նախադասության մեջ, ըստ Ջուղայեցու, «բայն» է ենթակա առնում, բայց ինքը համաձայնվում է նրան գեմքով և թվով. «Ամենայն բայ զիմաւոր ունի զուղական անունն. որում պարտի համաձայնիլ զիմաւ և թւով» (էջ 160): Ուրեմն ենթական զրվում է ուղղականով: Բացի դրանից, նկատում է սեռականով ենթակա՝ զրված «գերակատար» (վաղակատար-հարակատար անցյալ) ժամանակի հետ. «Ձի թէ ժողովրդեան իմոյ լւեալ էր ինձ» (էջ 142): Բազմակի ենթակաների մասին խոսելիս բնականն արդեն ասում է, որ ենթականերն են պահանջում հոգնակի ստորոգյալ (և ոչ հակառակը, ինչպես նշում է մի քանի տող առաջ). «Անունը շաղկապեցեալը զյոգնական բայն պահանջեն. որդան. պօղոս և բառնարաս շրջէին յանտիր»:

Ջուղայեցին մեկ առ մեկ նկարագրում է ստորոգյալի դիմային համաձայնությունից հետո տարբեր գեմքերով զրված բազմակի ենթակաների առկայության պայմաններում: Եթե դրանց մեջ կա 1-ին գեմքի անձնական գերանուն, ստորոգյալը զրվում է 1-ին գեմքով. եթե առկա են 2-րդ և 3-րդ գեմքի գերանուններ և զոյականներ, զրվում է 2-րդ գեմքով և ոչ հակառակ ձևով:

Որոշչի և որոշյալի համաձայնությունը նա անվանում է «համաձայնություն անուն ընդ մականդրական անուն»: «Մականդրական» և՛ ածականն է (հիմնականում), և՛ որոշիչը: Ջուղայեցին նկատում է, որ ևստղաս ածական-որոշիչը համաձայնվում է զոյականին, նախադասը՝ ոչ, բացի հոգ ստացածից (սբբոյն Յակօբայ) և որոշ այլ ածականներից (նկատի ունի միավանկները. մեծ||մեծի Բահանային. սուր||սբոյ աւետարանիս): Անհամաձայնություն կարող է լինել նաև իմաստային շփոթից խոսափելու համար. օրինակ՝ բաբի Բաղափառութեանց. «...Քանզի եթէ ասիցէ բարեաց քաղաքավարութեանց, նշանակէ զքաղաքավարութիւնս բարեաց ոմանց. այլ ոչ զբարի քաղաքավարութիւնս» (էջ 156): Նա նկատում է, որ ցուցական գերանուն-որոշիչները (միայն՝ այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն, որոնք համարում է հոգեր) ևստղաս գործածվելիս թվով և հոլովով համաձայնվում են որոշյալին, իսկ նախադաս գործածությունում համաձայնվում են միայն այս, այդ, այն ցուցականները (իհարկե, սոյն, դայն, նոյն ցուցականների կապակցությամբ նա սխալվում է. դրանք ևս համաձայնվում են, իսկ ևստղաս գործածություն չունեն):

Ջուղայեցին յայտնիչ (իմա՝ բացահայտիչ — Վ. Մ.) է համարում իբրև անուն և ազգանուն կամ անուն և մականուն գործածվող կապակցության մեջ եղած որոշիչները, որոնք զրվում են որոշյալի հոլովով, առանց շաղկապի: Նա

բացատրում է, որ եթե «մին իցէ յայտնիչ միսոյն, շարադրին ի միասին. հիկէն. յիսուս քրիստոս. սիմոն պետրոս. Բարսեղ սին...» (էջ 164): Ջուղայեցուց հետո երկար ժամանակ այսպիսի որոշիչները ավանդաբար դիտվում են բացահայտիչ:

Հատկացուցչի և ռատկացչալի հետ նրա համաձայնության հարցերը քերականը քննում է իբրև անվան ու գերանվան համաձայնություն և անվան խնդրառություն: Նա նկատում է գերանուն-հատկացուցիչներից միայն ստացականներով արտահայտվածները և կարծում է, թե դրանք հատկացչալին համաձայնվում են միայն հոլովով. թվային համաձայնությունը փաստորեն չի նկատում. «Բերանանքս այսորիկ իմ. քո. իւր. մեր. որք են ածանցեալք ուղղականը՝ համաձայնին ընդ անուն հոլովիւր միայն» (էջ 157): Հատկացուցիչը Ջուղայեցու մոտ որևէ անվանում չունի և հորջորջվում է ըստ հոլովի՝ պարզապես «սեռական». «Ենթակայական (=գոյական — Վ. Մ.) ուղղականն՝ յաւէտ զսեռականն առնու. որկէն. հոգի մարդոյ. երկիւղ տեառն» և այլն (էջ 164): Հավարական անունների գոյական-հատկացուցիչը դրվում է հոգնակի թվով. «Եւ բազմական անունք գյոգնական սեռականն առնուն. հիկէն. բանակը հրեշտակաց. երամք աղանեաց» և այլն (էջ 164): Քերականը որոշակիորեն նկատում է հատկացուցչի արտահայտած պատկանելության, ստացական հարաբերությունը. հատկացուցչի լրացյալը լինում է ունեցվածք. «Այսպիսիք յորժամ ստացածք լինին, զսեռականն առնուն. հիկէն. զօգուտն ձեր գութ դիտէք. բարին իմ բեղ չէ պիտոյ» և այլն (էջ 166): Այստեղ նաև մատնանշվում է, որ հատկացյալը որոշակի հոլով չունի, հատկացուցիչը գործածվում է բոլոր հոլովների հետ: Եվ բերվում են ուղղական, սեռական, տրական, հայցական և բացառական հոլովներով դրված հատկացյալների օրինակներ: Այդ է հաստատում նաև «աստուծոյ պատկեր» բառակապակցության հոլովումը՝ հատկացուցչի նախադաս և ետադաս գործածությամբ (էջ 171):

Բացահայտիչը, լրացյալի հետ միասին, Ջուղայեցին բնկալում է իբրև միեկնույն հոլովով դրվող երկու բառերի կապակցություն: Սակայն նկատում է, որ մեկը կարող է մյուսի համար «յայտնիչ» լինել, և վերևում մեր նշած օրինակների հետ (Սիմոն Պետրոս, Բարսեղ Սին) բերում է նաև բուն բացահայտչի օրինակ՝ «Մարեմաւ մարբն իւրով» (էջ 164):

Իբրև հաւաքեւականի և հաւաքեւչալի համաձայնություն («համաձայնութիւն մակածականին ընդ նախընթացին») Ջուղայեցին քննում է որ հաւաքերական գերանվան համաձայնությունը նախորդ նախադասության մեջ եղած այն գոյական անվան հետ, որին փոխարինում է ուր-ը: Այդ համաձայնությունը լինում է միայն թվով: Հոգնակի ուղղականի և հայցականի հաւաքերականները երբեմն թվով չեն համաձայնվում. «Աւել՝ որ ընդ նմա գնային... պատմեն մեկ օրէնս՝ Գաւ չէ արժան մեկ ընդունիլ» (էջ 159):

Քերականը նկատում է նաև դրաբարի համար բնորոշ մի երևույթ. երբեմն բաց է թողնվում այն անունը, որին հաւաքեւրում է ուր-ը. «Եւ ընբազում տեղիս նախընթացն զօրութեամբ լինի. որպակ. երանի, որք լան. երանի, որոց թողան մեղք. վասն, որք ի լերինս և այլք» (էջ 159):

Հարցական դերանվան և պատասխանի համաձայնությունը արտահայտվում է միմիայն հոլովով. «Պատասխանին համաձայնի հարցման հոլովիւ.

որբար. ո՞վ է: Ներսէս... ո՞ւմ աշակերտեցար, սրբոյն Գրիգորի Տաթևացուն» (էջ 159):

Ջուղայեցին քննում է բառակապակցություններ իբրև անունների հոլովառության և բայերի խնդրառության դրսևորումներ, թեև որոշակիորեն դիտե, որ դրանք կապակցություն են. մեկ անգամ, երբ անհրաժեշտ է դրանք անվանել, «աստծոյ պատկեր» կապակցությունը կոչում է «կցեալ անուն» (էջ 71), սակայն շարադրելու ընթացքում դա անտեսում է և բառակապակցություն հասկացությունը նշող որևէ տերմին չի գործածում: Այդուհանդերձ Ջուղայեցին առաջինն է հայ բերականագիտության մեջ, որ հիմնադրում է կապակցությունների ուսմունքը և փորձում վերլուծել բազմազան լրացական կապակցություններ, ցույց տալ նրանց կիրառական առանձնահատկությունները, շարահյուսական դերը և հատկապես հոլովական արտահայտությունները: Զմռանանք, որ այս վերջինը (ձևաբանական մոտեցում) դարձնում է հարցի քննության հիմունքը: Քերականը կապակցություններն ուսումնասիրում է բավական խորը, թեև ոչ ամբողջությամբ: Նա անհամեմատ բարձր է կանգնած իր ժամանակակիցներից և որոշ երևույթներ ներկայացնում է զգալի մանրամասնությամբ: Եթե նկատի ունենանք, որ նա հայերենի շարահյուսության քննության առաջին փորձն է կատարում, ապա խիստ է նրա մասին պրոֆ. Վ. Առաքելյանի հայտնած այն կարծիքը, թե «Ջուղայեցու գրքի շարահյուսական մասը շատ խղճով մի բան է...»²:

Անվանական բառակապակցությունները քննելով իբրև «ենթակայական»-ի ու «մականդրական»-ի խնդրառություն՝ Ջուղայեցին դրանք նկարագրում է խնդրառու բառի կողմից՝ ըստ լրացյալի ունեցած բառական նշանակության և ըստ ընդունած «խնդրի» հոլովի: Հարցի քննության տվյալ մեթոդը չէր կարող պարզությամբ բացահայտել կապակցությունների էությունը, նրա բաղադրիչների փոխհարաբերությունը, իմաստային տարբեր դրսևորումները և, առավելապես, շարահյուսական դերը: Այդ է պատճառը, որ կապակցություններն ստանում են մասամբ միակողմանի նկարագրություն (լրացյալի կողմից) և լուսաբանվում են աղոտ կերպով: Պատկերն այլ կլիներ, եթե քննությունը տարվեր լրացման կողմից՝ նրա շարահյուսական դերի ու դրսևորած իմաստի գնահատմամբ: Քերականն, իհարկե, ընդհանրապես անտեսել է վերջիններին: Ընդհակառակն, նա հենց դրանք նկատի ունի: Բացակայում է ոչ թե, ասենք, հատկացուցիչ, հանգման խնդրի և այլ անդամների բերականական իմաստների բմբռնումը, այլ ընդհանրապես նախադասության, իբրև բերականական միավորի, ու նրա տարբերացված անդամների ըմբռնումը (նաև համապատասխան տերմինները): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնդինակի նշած «սեռականը» հատկացուցիչ է (ոչ միայն հոլովածե), տրականը՝ հանգման խնդիր և այլն: Դրանք դրսևորում են տվյալ հոլովների նաև այլ՝ հոլովական նեղ իմաստներ, որոնց մի մասը բերականը չի կարողանում առանձնացնել՝ համապատասխան հասկացությունները չպատկերացնելու պատճառով: Այդուհանդերձ բերված օրինակները վերաբերում են հոլովների ամենատարբեր իմաստային առումներին, որոնց մի մասը բերականը պատկերացնում է որոշակիորեն: Այդ ելակետից էլ նա քննում է բառակապակցությունները: Հենց բառակապակցություններն էլ դարձան այն հիմքը, որի վրա

2 Վ. Առաքելյան, Ներածություն «Հայերենի շարահյուսության», Երևան, 1959, էջ 10:

հայ բերականագիտությունը շարունակեց, զարգացրեց ու մշակեց շարահյուսությունը, ավելի ուշ՝ նաև նախադասության ուսմունքը: Նշենք նաև, որ թեև նախադասության անդամները նա շարահյուսական տերմիններով չի անվանում, բայց հոլովական իմաստները հիմնականում բացատրում է, այն էլ բավականին որոշակի: Այդ բացատրությունների ընդհանրացման և բերված օրինակների հիման վրա կարելի է ասել, որ Զուղայեցին նկատել է զրաբարի հոլովների և հոլովական կապակցությունների (— հոլովված բառի և նախադրության—Վ. Մ.) հետևյալ իմաստային առումները և նախադասության հետևյալ անդամները:

ՍԵՌԱԿԱՆ հոլովի կիրառությունից նա նկատում է.

ա) Հատկացուցիչը, որն անվանում է «սեռական», թեև այն բնութագրելու համար գործածում է նաև «յատկացուցիչ» բառը. «Սեռականն իբրև զստացող և յատկացուցիչ³ անուանց ընդ ամենեսևան վարի»: 1) Պատկանելության սեռականը. «Գրիգոր է անուն աշակերտի իմոյ»: 2) Ենթակայական սեռականը. «Փառք գալստևանն ֆրիստոսի»: «Ձատելիս քո տէր ատեցի»: «Երկնիմ ի սպառնալեաց զեհեռոյն» (էջ 194): 3) Ազգակցության սեռականը (սա չի բացատրված). որդի իմ, քո, իւր, ձեր. սէր ուրոյ իմոյ, քոյոյ և այլն (էջ 157): 4) Մարդկային հաւերերութեան սեռականը: Սրա բացատրությունը վերաբերում է լրացյալի բառական իմաստին (բարեկամություն, ներհակություն ցույց տվող). բարեկամ վարդապետաց, թշնամի արդարութեան (էջ 165):

բ) Սեռականով դրվող որոշիչը (բաղկացության սեռական), որը լինում է հոգնակի և դրվում հավաքական անունների հետ. բանակը հրեշտակաց, երամք աղանեաց, գունդը զօրաց, դասը ֆահանայից (էջ 164):

գ) Սեռականով դրվող ենթական՝ 1) անորոշ դերբայի մոտ. «Ընդ արևու մտանել որոց էին պէսպէս ցաս, բերէին զնոսա առնս: Ի դնելն ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն հոգին սուրբ ի վերայ նոցա: Իջանելով քոյ ի դոփս...» (էջ 198): 2) Անցյալ դերբայի մոտ դրվող կողմնակի ենթական. «Եւ տեսեալ յիսուսի զժողովորդն, եւ ի լևառն» (էջ 115):

դ) Կողմնակի ուղիղ խնդիրը (դերբայի մոտ). «Սիրօղ ճշմարտութեան, ատեցօղ ստութեան»: Քերականի համար սրանք ենթակայական դերբայի մոտ դրվող «սեռական» են, սակայն, ինչպես նկատում ենք, առանձնացված են իբրև մեկ նշանակության արտահայտություններ:

ե) Որոշիչ, որ թվականի հետ ցույց է տալիս տարիքի, գնի, մեծության չափեր. «Եւ նշանակիչը չափոց ոմանց, զսեռական առնուն. որգոն. Բսահակ ամաց վաքսնից. գետինն շուրեմ հաբիւր սատեւ արծաթոյ» (էջ 164): Սեռականի այլ պաշտոններ կամ հոլովական իմաստներ նա չի նկատել:

ՏՐԱԿԱՆ հոլովի կիրառությունից նկատել է.

ա) Հանգման և մատուցման խնդիրը, որի մասին որևէ բացատրություն չի տալիս, բայց առանձնացնում է իբրև բայի խնդրառության մի դրսևորում՝ բերելով օրինակներ. «Երկիր պաղանեն հօր հոգւով» (էջ 174) և այլն:

բ) Համապատասխանության խնդիրը՝ ածականների մոտ. «Մակադրականք նշանակօղը հանգիտութեան և անհանգիտութեան՝ զտրականն առնուն. հիզան. հաւասար հրեշտակաց. հանգէտ սուսեւոց (165), արժանի զովութեան, վայելուչ (— վայել) աշակերտաց» (166) և այլն:

³ Նրեւոյթը բնութագրող այս բառն էլ հավանաբար դարձել է նրա անվանումը:

գ) Շահի խնդիրը. օգուտ ուսումնասիրաց, բարի Բեզ, շար ինձ, պիտանի Բեզ և այլն (166): Սա համարում է օգտակարություն և դրա հակառակը ցույց տվող բառերի ընդունած տրական:

դ) Տրականով եներական (համարում է անորոշի ընդունած տրական). «Եղև նմա անցանել ընդ արտորեայսն» (199):

ՀԱՅՏԱԿԱՆ հոլովի կիրառությունից Զուղայեցին նկատել է մի շարք դեպքեր, առանց համապատասխան անվանումների (դրանք դիտում է իբրև որոշ կարգի բայերի կամ ածականների պահանջած «հայցականներ»).

ա) Ուղիղ խնդիրը. «Ամենայն ներգործական բայք... առնուն զհայցականն... հայր սիրի գորդի» (էջ 178):

բ) Համեմատության խնդիրը. «Բազդատական և գերադրական մականդրականք զհայցականն առնուն՝ հանդերձ քան նախդրին. որպակ. իմաստնագոյն քան զիմաստասերս. ահա և սաստկագին քան զդժոխս: Եւ երբեմն առանց ածանցելոյ վարին. որբար. սաստիկ քան զհատումն անդամոց. մեծ քան զիս» և այլն (էջ 167—168):

գ) Փամանակի սլարագան. «Բայք ոմանք՝ զժամանակացոյց հայցական առնուն. որբար. զվեց օր գործեսցես... զգայգ և զցերեկ արտասէր» (էջ 179):

ԲԱՅԱԿԱՆ հոլովական իմաստներից նկատել է.

ա) Ներգործող խնդրի բացառականը (իհարկե, առանց տերմինի): Նշում է, որ այսպիսի խնդրառությունը հատուկ է բոլոր կրավորական բայերին: Օրինակ՝ «Առաքեցար ի հօրէ բանդ աստուած» (էջ 179):

բ) Պակասության բացառականը, իբրև պակասություն ցույց տվող բառերի խնդիր. զրկեցեալ ի փսոաց. դատարկ ի զինույ. պակասեալ ի շնորհաց. մերկ ի հանդերձից (էջ 168):

գ) Պատմական բացառականը (վերաբերության անուղղակի խնդիր), որն անվանում է «պատմական հոլով»: Օրինակ՝ «Ասեմ զԲէն. Խորհէին զԲէն. տրտնչէին զտանուտեանն» (էջ 181—182): Իբրև այսպիսի խնդրառություն ունեցողներ նշվում են ասացական, մտածական բայեր: Բացառականի հոլովական մի քանի իմաստներ (անջատման, պասսիվ ներգործության և այլն) չեն տարբերակվում, դրանց համար բերվում են խառն օրինակներ:

ԴՈՒՄԻԱԿԱՆ կիրառությունից նկատել է.

ա) Միջոցի խնդիրը. «Գործիական իբրև զգործի ընդ ամենեսեան բայից վարի». օրինակ՝ «Մեռանիմ ի քէն սրով» (էջ 196):

բ) Ահմանափակման խնդիրը, սակայն դիտվում է գովասանք կամ պարսալանք ցույց տվող բայերի խնդրառության դրսևորում. ողբերգությամբ որդի. անբիծ վառուի. շնորհօք աստուած, լի շնորհօք, դարձ մտօք, Լրիտասարդ հասակաւ, փարթամ ընչիւմ (էջ 167):

Զուղայեցին սրանց կողքին հավասարապես ներկայացնում է նաև հոլովների հետ նախադրությունների գործածության (նախադրության և խնդրի) առանձին փաստեր: 1) Լկյալես, նա նկատում է, որ սեռականը վասն նախադրության հետ արտահայտում է պատճառային, նպատակային⁴ հարաբերու-

⁴ Զուղայեցին պատճառականություն է համարում և՛ պատճառային, և՛ նպատակային հարաբերությունները. թեև վերջինը պարզ զղացվում է բերվող օրինակների մեջ: Դա կապված է «պատճառական» հորջորջվող նախադրությունների հետ՝ վասն, սակա և այլն:

թյուն և «պատմականի» (վերաբերության բացառականի) իմաստ. «Հիբար. իշխանը ժողովեցան ի միասին, վասն տեսնոն և վասն օծելոյ նորա (էջ 194):

2) Նկատել է տրականի և ընդ նախդրի գործածությունը (փոխկապվածության տրական) ամուսնանամ, կոուիմ, միաբանիմ և նման բայերի մոտ. «Մարտնշէին ընդ Լիբօւ իւրում» (էջ 178):

3) Անորոշ դերբայի հետ ի նախդրի արտահայտած նպատակի հարաբերությունը. «Նկն ի կեցուցանել զմեզ»:

4) Նկատել է անորոշի հետ ի. ընդ նախդիրների ժամանակ ցույց տալու իրողությունը. «Յեկանելն դիւին խոսեցաւ համրն: Ընդ վիճել նոցա.... յիսուս եկն» (էջ 200):

Քերականը դիտել է նաև տարբեր հոլովներով դրվող տեղի պարագաներ, իբրև տարբեր բայերի խնդրառություններ: 'Իրանցից են՝ ա) հայցականը ի նախդրի հետ (շարժում, տեղափոխություն ցույց տվող բայերի մոտ՝ գնալ, և այլն), որը նա անվանում է «նախդրի տրական». օրինակ՝ «Գնաց յիսուս ի լեառն» (էջ 176). բ) շարժման ելակետի բացառականը. «Ի տանեացն անկաւ ի դետին» (էջ 177). գ) գ նախդրի հետ տեղ ցույց տվող գործիականը (անվանում է արտադրական). «Երջեցան զինն որպէս զջուր» (էջ 183). դ) «ներդրականով» տեղի պարագան. «ներդրական ցուցանելով գտնելի իրաց և իրակութեանց վարի ընդ ամենեանս. որպակ. աստուած ի տանարի իւրում յայտնի: Օղնեա տէր ինձ ի նեղութեան իմում» (էջ 196). ե) նույնպիսի իմաստ է նկատում այլ հոլովածների մեջ. «Հրեշտակ տեսնոն զիշերի⁵ եբաց զդուռն: Կացուցէ զօղիսն ընդ աջմէ և զաջծինս ի ձախմէ» (էջ 196): Քերականը քննում է նաև պարագայական (չափի) բառակապակցությունները, որոնց լրացումը (որոշիչ) իր հերթին ունի թվական-լրացում: Նա ի մի է բերում այդ կարգի կապակցություններն իբրև չափ ցույց տվողներ, ուշադրություն է դարձնում ոչ միայն լրացման, այլև լրացյալի հոլովական արտահայտությանը (ուղղականի և սեռականի ժամանակ): Ըստ որում օրինակները վերաբերում են գրեթե բոլոր հոլովներին. ուղղական՝ հարիւր կանգուն երկարութիւն և յիսուն կանգուն լայնութիւն, սեռական՝ երկայնութիւն կանգնոց քսանից.... գործիական՝ կանգնաւ երկայնութիւն և կանգնաւ լայնութիւն, բացառ. երկայնութիւն ի վաթսուն կանգնոյ... Իսկ տրականի (նախդրի) օրինակը վերաբերում է միայն լրացյալին՝ քսան կանգուն յերկայնութիւն (էջ 170—171):

Բայի խնդրառությանը ևս Զուղայեցին մեծ տեղ է հատկացնում՝ աշխատելով ըստ այդ հատկանիշի խմբավորել բոլոր բայերը: Սակայն այդ դասդասումը խիստ ձևական բնույթ է ստանում և առավելապես «հոլովառություն» է, քան խնդրառություն, որովհետև բայերի տեսակներ են առանձնացվում նրանց լրացումների ձևական հատկանիշների հիման վրա, ըստ հոլովների, իսկ իմաստով այդ լրացումները (նաև բայերը) խայտաբղետ են: Օրինակ, իբրև բացառական պահանջողներ խմբավորված են բայեր, որոնք պահանջում են տարբեր լրացումներ՝ տեղի պարագա (յառնեմ, ոստնում), պասսիվ ներգործության անուղղակի խնդիր (պակնում, զարշիմ, ձանձրանամ), «պատմական» ընդունողներ (ասեմ, տրտնջեմ, այլև բուռն հաբկանեմ) և այլն: Միևնույն խմբում հանդես են գալիս անգամ տարբեր սեռերի բայեր: Կան, իհար-

⁵ Տրականի հին ձևը՝ ի նախդրի անկումով: Սա ժամանակ է ցույց տալիս՝ ստանալով մակրայի արժեք:

կե, և հակասություններից զերծ խմբեր, ինչպես հայցական պահանջողները (ներդործական բայեր) և այլն: Քերականը նշում է, որ ներգործական սեռի մի շարք բայեր (յաղթել, իշխել, առաջնորդել և նմաններ) ընդունում են տրականով խնդիր, ինչպես՝ քեզ առաջնորդեմ, յաղթեմ և այլն (էջ 179): Նա իբրև բայի խնդրառության (հոլովառութիւն) արտահայտություններ է ներկայացնում նաև նախադասության այլ անդամներ՝ պարագաներ, անգամ ենթական ու ստորոգյալի գոյական վերադիրը, և այդպիսի ըմբռնումը պահպանվում է հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ (մինչև XIX դարը): Ահա նրա ձևակերպումը. «Առաջին կանոն է եզրական հոլովառութեան բայից. որք առնուն երկուս ուղղականս. որզոն. ես եմ ձանապարհ... ես անանիմ վարդապետ. դու թագաւոր երեխս» և այլն (էջ 173):

Ջուղայեցին «յոգնառական» հոլովառություն ասելով՝ հասկանում է միևնույն բայի հետ կապվող տարբեր լրացումները (մեծ մասամբ հայցական) և նրա հետ այլ հոլովներով դրված (տրական, հայցական, բացառական) մեկերկու խնդիրների կամ պարագաների կիրառությունը, ինչպես՝ «Յերկնից լուս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս: Եվ Դաւիթ եհան զտապանակն տեառն ի տանէ աբեղարայ ի քաղաք Դաւիթ ուրախութեամբ» (էջ 186—187): «Յոգնառական հոլովառութիւն» է դիտված նաև միադիմի բայերի «խնդրառությունը»: Քերականը նկատում է անորոշ դերբայի հետ սեռական ու տրական, անցյալ դերբայի հետ՝ սեռական հոլովով դրվող ենթակաները, դերբայի փոխանվանական գործածությունը և այլ երևույթներ (էջ 197—199):

Շարահյուսական հոմանշության երևույթին Ջուղայեցին անդրադառնում է տարբեր առիթներով, իբրև անունների ու բայերի «յոգնառական» հոլովառություն և նախդիրների ու նախադրությունների իմաստային «համագործություն»: Նա իմաստային ընդհանրություն է տեսնում մասի և ամբողջի հարաբերությունը դրսևորող սեռական և բացառական հոլովաձևերի միջև (իւրաքանչիւր նոցա կամ ի նոցանէ. անբննելի հրեշտակաց կամ ի հրեշտակաց, ոմն շաղկապաց կամ ի շաղկապաց և այլն), սահմանափակման բացառականի ու գործիականի միջև (մաքուր մտօք կամ ի մեղաց): Նա հոմանշություն է տեսնում որոշ հոլովաձևերի և նախդրավոր ձևերի միջև, ինչպես «ներգոյական» և ընդ նախդրով բացառական՝ ընդ աշմէ, ընդ ձախմէ (էջ 196), գործիական և «ներդոյական»՝ համակեալ ոսկեաւ և յոսկւոջ (էջ 170), օրհնեալ յանուն (սա հայցական է — Վ. Մ.) տեառն և անուամբ տեառն (էջ 196), «պատմական» և վասն նախդրով սեռական՝ զիւն կամ վասն քո խորհէին (էջ 194) և այլն: Քերականը նման իմաստային հարաբերություններ է տեսնում տարբեր նախդիրների ու նախադրությունների միջև, արժեքավոր դիտողություններ է անում դերանունների բառական-իմաստային և ոճական-կիրառական առանձնահատկությունների ու նուրբ տարբերությունների վերաբերյալ (էջ 152—154), որոնց մանրամասնորեն չենք անդրադառնում տեղի սղության պատճառով:

* * *

Ջուղայեցին քննում է նաև նախադասությունը, բայց տրամաբանական տեսանկյունից: Այն, իբրև քերականական միավոր, կարգ, չի ընդունվում նրա (և ընդհանրապես XVII դարի քերականների) կողմից, դիտվում է տրամաբանական կարգ և քննվում բացառապես տրամաբանական երկում: Ծիշտ

է, «բանը» նաև դիտվում է քերականության շորս մասերից (գիր, վանկ, բառ, բան) մեկը և սահմանվում մի քանի տողով, բայց դրանով էլ ավարտվում է նրա քննությունը: Ըստ որում «բան» նշանակում է և՛ խոսք, և՛ նախադասություն (այդ հասկացությունների միջև սահման չի անցկացվում) և բնութագրվում է իբրև բառերի կապակցություն, որն արտահայտում է մտածություն. «Բան է՝ շարամանութիւն բառից, յայտնօղ տրամախոհութեան» (էջ 24):

Տրամաբանության գրքում «բանը» բնութագրվում է գրեթե նույն կերպ, իբրև իմաստ արտահայտող բառերի կապակցություն. «Բան է՝ ձայն յօդաւոր, դրական, նշանական. որոյ մասունք զատեալք՝ են նշանականք»⁶:

Զուղայեցին տարբերում է խոսքի (նախադասության) երկու տեսակ՝ ներքին, շարտաբերված և արտասանված խոսք. «...Բանին կրկին է տեսակ. ներտրամադրեալ և Արտաբերեալ»։ առաջինը մտքում է, ներսում, երկրորդն արտաբերվում է բառերի միջոցով⁷: Նա նկատում է նախադասության տեսակներն ըստ բնույթի (երանգի), որոնք նրա կարծիքով հինգն են՝ բացերեական (—պատմողական), հրամայական, ըղձական, ստորադասական և աներևույթ: Դրանք լիովին համընկնում են նրա ընդունած բայի եղանակների հետ: Հեղինակը քննում է միայն պատմողականը, որովհետև մյուսներով դատողություններ, մտահանգումներ չեն լինում («այլովքն ոչ լինի տրամաբանութիւն»): Նրա ձևակերպման համաձայն այդ երանգները հատուկ են հենց մտածությանը: Հեղինակը գործածում է նաև նախադասութիւն տերմինը, բայց «բան»-ի տեսակներից մեկի համար, որը տրամաբանական դատողության (սիլլոգիզմ, իր տերմինով՝ հաւաքաբանութիւն) մեջ հանդես է գալիս իբրև նրա երեք անդամներից մեկը, այն է՝ եզրակացությանը նախորդող մի նախադասություն: Ընդ որում Զուղայեցու ըմբռնմամբ նախադասությունն, բացէւրեւությունն և առաջարկությունն հասկացությունները միևնույն են (կազմությամբ և քերականական, ընդհանրապես խոսքային տեսակետից), բայց նույնը չեն՝ տրամաբանական տարբեր տեսանկյուններից դիտելու դեպքում: Դա բացէւրեւություն է կոչվում, երբ առարկայի մասին մի բան է հաղորդում՝ վերագրելով կամ ժխտելով, նախադասություն՝ երբ սիլլոգիզմի մեջ նախորդում է եզրակացությունը, և առաջարկություն՝ երբ դիտվում է քննության առարկա⁸:

Տրամաբանական տարբեր ասպեկտներով դիտվող այս նախադասությունը կազմված է եկրակալից և ստորոգյալից, որովհետև դատողություն (ասպացուցում, նախադրյալ) հանդիսացող այդ նախադասության մեջ պետք է մեկի (ենթակալի) մասին մի բան նշվի (ստորոգյալ)՝ ստորոգվող հատկանիշը վերագրելով (հաստատելով) կամ ժխտելով, ինչպես օրինակ՝ «Սոկրատէս ընթանայ: Սոկրատէս ոչ ընթանայ»: «Բացերևութիւն է բան ապացուցօղ զիր իմն զումեքէ, ստորասական կամ բացասական. նշանակօղ չձմարտութեան կամ ստութեան: Քանզի քացերևութիւն՝ ստորոգութիւն իմն զենթակայէ իմեքէ քացերևոցէ ստոր ասելով կամ ասլուսելով»⁹: Կամ վերցնենք պարզ «ստորոգական նախադասության» օրինակն ու բացատրությունը. «Ստորոգական

⁶ «Իբրբ տրամաբանութեան. Խիմէօնի Զուղայեցույ գերիմաստ վարդապետի արարեալ»։ Կոստանդնուպոլիս, 1728, էջ 94:

⁷ Նույն տեղում, էջ 90:

⁸ Նույն տեղում, էջ 95:

⁹ Նույն տեղում, էջ 95:

է, յորում է մի ենթակայ և մի ստորոգեալ, որդոն, արեգակն ծագեալ է: Ահա աստ՝ արեգակն է ենթակայ, և ծագեալն ստորոգեալ.... Քանզի ենթակայ է՝ զորմէ ասի իր իմն. և ստորոգեալ է որ զայլմէ ասի»¹⁰:

Զուղայեցին անդրադարձել է նաև նախադասութեան զլիսալոր անդամների արտահայտությանը, նկատելով, որ ենթական արտահայտվում է անվամբ, ստորոգյալը՝ և՛ անվամբ, և՛ բայով: Բերելով «մարդ յաղթէ, ձի ընթանայ» և «Մարդն բանական է. ձին սմբակաւոր է» օրինակները՝ նա բացատրում է, որ առաջին երկու օրինակներում ստորոգյալները արտահայտված են բայով, հաջորդներում՝ անուններով, իսկ ենթակաները բոլոր օրինակներում անուններ են¹¹ (նա որեւէ բան չի ասում բաղադրյալ ստորոգյալի հանդույցի մասին):

Դատողական նախադասության՝ տրամաբանական տեսանկյունով քննվող բաղադրական տեսակների մեջ քերականը նշում է նաև պարզ և բարդ նախադասությունները ու սրանցից առաջինի տեսակները՝ համառոտ և ընդարձակ: Հստ նրա պատկերացման՝ պարզ համառոտ նախադասությունը («պարզ») կազմված է ենթակայից և ստորոգյալից (Պետրոսն է մարդ), իսկ ընդարձակի («բաղադրեալ») ստորոգյալն ունենում է լրացում (Պետրոս է արդար մարդ):

Զուղայեցին պարզ նախադասությունն անվանում է «ստորոգական», բարդը՝ «ստորադրական»: Առաջինը կազմված է միայն ենթակայից և ստորոգյալից, ինչպես արդեն նշել ենք, իսկ երկրորդը՝ երկու պարզ նախադասություններից. «Իսկ ստորադրական է՝ յորում է .Բ. ստորոգական նախադասություն. որդան, եթէ արեգակն ծագեալ է՝ տիւ է»: Սա հեղինակն անվանում է ստորադրական՝ ելնելով բաղադրիչներից մեկի ստորադաս հարաբերությունից: Նա քննում է նաև նախադասության այլ առանձնահատկություններ:

ВОПРОСЫ СИНТАКСИСА В ГРАММАТИЧЕСКОМ ТРУДЕ СИМЕОНА ДЖУГАЕЦИ

В. Ш. ЦАРУКЯН

(Резюме)

Симеон Джугаеци (XVII в.) в своем грамматическом труде пытался представить в целом синтаксис древнеармянского языка. Строго не разграничивая синтаксис от морфологии, он морфологическими терминами обозначает и морфологические, и синтаксические категории.

Джугаеци рассматривает согласование членов предложения, управление глаголов, предлогов и имен существительных. В его книге рассматривается ряд синтаксических категорий: дополнение существительных и глагольных членов, некоторые обстоятельства (а также разные надежные значения), разнообразные словосочетания, синтаксические синонимы и т. д. Джугаеци одновременно четко представляет предложение, главные его члены, вид и ряд свойств предложения, считая его не грамматической, а логической категорией.

¹⁰ նույն տեղում, էջ 97:

¹¹ նույն տեղում, էջ 3-4: